ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2022թ.

2022 թվականի մարտի 09-ին, ժամը 15:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», «2021 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի հանգստի գոտու վերանորոգման շրջանակներում պուրակի կառուցում», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մարզադպրոցի կառուցում», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գույքի ձեռք բերում» ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մանկապարտեզի կառուցում», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատում» ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավանում ոռոգման համակարգի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում», «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսական

գործունեության նախահաշիվը և դրա 2021 թվականի կատարողականը հաստատելու մասին», «Բյուրեղավան համայնքի սեփականության 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին», «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին», «Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը, ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը, «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Նարինե Զաքարյանը:

Օրակարգի առաջին՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»*** հարցի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի1-ին մասի 5-րդ կետի՝ *համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը*, 83-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է ավագանին*, և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

.Օրակարգի երկրորդ՝ ***«2021 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին»*** որոշման նախագիծը կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝ *մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի*

ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով, սահմանված դրույթները:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» N 19-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման ծրագիրը:

Ս, Ղազարյանը ներկայացրեց, որ սույն որոշման նախագծով առաջարկվում է հաստատել 2021 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«2021 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին»*** Ս, Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի 2021թ. ՏԱՊ-ի բաժիններից է ՏԱՊ-ի մոնիտորինգի և գնահատման պլանը: ՏԱՊ-ի իրականացման կիսամյակային հաշվետվությունը կազմվել է մեթոդական ուղեցույցի համաձայն և մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2021 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և 2021 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան***

հաշվետվության մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի չորրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի հանգստի գոտու վերանորոգման շրջանակներում պուրակի կառուցում»*** որոշման հարցի շուրջ Ս Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի հանգստի գոտու վերանորոգման շրջանակներում մոտ 2500քմ. մակերեսով հողատարածքի վրա նախատեսվում է կառուցել նոր պուրակ ՝ պայմանավորված մոտ 12 հազար բնակիչ ունեցող քաղաքում բնակիչների հանգիստը պատշաճ կազմակերպելու, կանաչապատ և ավելի բարեկեցիկ միջավայր ստեղծելու անհրաժեշտությամբ:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի հանգստի գոտու վերանորոգման շրջանակներում պուրակի կառուցում»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի հինգերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մարզադպրոցի կառուցում»*** որոշման հարցի շուրջ Ս Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում առկա է մարզային ենթակայության մարզադպրոց, ուր հաճախում է 272 երեխա: Նշենք, որ ստեղծման օրվանից մարզադպրոցը չունի շենքային պայմաններ և գործել է հարակից դպրոցի նկուղում և մարզադահլիճում: Մարզադպրոցում գործում է ձյուդոյի, սամբոյի, բռնցքամարտի, ազատ ոճի ըմբշամարտի և ֆուտբոլի 23 խումբ: Հաշվի առնելով Բյուրեղավանում ձևավորված մարզական ավանդույթները, Հայաստանի պատիվը բարձր պահած մարզիկների առկայությունը, ինչպես նաև սպորտի ու առողջ ապրելակերպի նկատմամբ հետաքրքրությունների աճի տենդենցը՝ անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավանում նոր մարզադպրոցի կառուցման: Ծրագրի իրականացման խնդիրն է բնակավայրի երեխաներին ապահովել հասանելի մարզական կրթությամբ, նպաստել հայրենական սպորտի զարգացմանը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մարզադպրոցի կառուցում»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վեցերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գույքի ձեռք բերում»*** որոշման հարցի շուրջ Ս Ղազարյանը ներկայացրեց, որ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքը 2020-2021 թվականների ընթացքում ամբողջությամբ հիմնանորոգվել է և ունի նոր գույքի կարիք, ինչը հնարավորություն կտա հիվանդներին մատուցել բժշկական որակյալ ծառայություն: Պոլիկլինիկայի կողմից մատուցվող առողջության առաջնային պահպանման ծառայություններից օգտվում են Բյուրեղավան, Նուռնուս և Արզնի բնակավայրերի թվով 9000-ից ավելի քաղաքացիներ: «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վարչական շենքի կահավորումը կբարձրացնի բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայության որակը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գույքի ձեռք բերում»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի յոթերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մանկապարտեզի կառուցում»*** որոշման հարցի շուրջ Ս Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում առկա է մեկ մանկապարտեզ, իսկ բնակավայրի նախադպրոցական տարիքի երեխաների թիվը ավելի քան 550 է: Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզն ունի 4 խումբ, որտեղ առավելագույնը տեղավորվում է 120 երեխա: Հաշվի առնելով Բյուրեղավանում նախադպրոցական տարիքի երեխաների առկա թիվը և հետագայում աճի տենդենցը՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքում նոր մանկապարտեզի կառուցման: Ծրագրի իրականացման խնդիրն է բնակավայրի երեխաներին ապահովել հասանելի նախադպրոցական կրթությամբ:

Որոշվեց՝

- հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքում մանկապարտեզի կառուցում»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի ութերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատում» ծրագիրը հաստատելու մասին»*** Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան և Նուռնուս բնակավայրերի ճանապարհների վնասվածության պատճառով տրանսպորտային միջոցների երթևեկությունը դառնում է անհարմար: Այդ և Բյուրեղավան բնակավայրի մայթերի և բակային տարածքների բարեկարգման խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ճանապարհների և մայթերի հիմնանորոգման, բակերի բարեկարգման և կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հետիոտնի հարմարավետ տեղաշարժը և տրանսպորտային միջոցների երթևեկությունը, ինչը կստեղծվի բարեկեցիկ միջավայր:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատում» ծրագիրը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի իններորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավանում ոռոգման համակարգի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում»*** որոշման հարցի շուրջ Ս Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի ոռոգման համակարգի ներքին ցանցը կառուցվել է տարբեր ժամանակներում, մաշված է և ունի մեծ կորուստներ: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի ոռոգման համակարգի ներքին ցանցի կառուցման, նորոգման աշխատանքներ: Ծրագրի իրականացումից հետո Բյուրեղավան բնակավայրը կունենա ավելի արդիական ոռոգման համակարգ, կավելանան կանաչապատ տարածքները, կնվազեն ոռոգման ջրի կորուստները:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավանում ոռոգման համակարգի ներքին ցանցի կառուցում և վերանորոգում»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի տասներորդ՝ ***«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու***

2018 թվականի մարտի 12-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ սույն որոշման ընդունման արդյունքում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կկարգավորվի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման հետ կապված ընթացակարգային բնույթի իրավահարաբերությունները, միաժամանակ, կստեղծեն օրենսդրական հիմքեր համայնքի ղեկավարի համար, համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ տրամադրելու մասով:

Բացի իրավական կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից, սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև համայնքում տնտեսական գործունեության խրախուսման և կանոնակարգման անհրաժեշտությամբ:

Սույն հիմնավորումից բխող համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը միտված է նաև ապահովելու «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված մի շարք համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը, մասնավորապես, նկատի ունենալով հետևյալ պարտադիր խնդիրները

- Համայնքի կայուն զարգացումը.
- Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի տասնմեկերորդ՝ ***«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծի շուրջ Ավուշյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում համայնքի վարչական տարածքում կկարգավորվի արտաքին գովազդ տեղադրելու հետ կապված իրավահարաբերությունները, օրենսդրական հիմքեր կստեղծվեն թե՛ արտաքին գովազդի մասով համայնքի ավագանու կողմից տեղական տուրքի սահմանման և թե՛ համայնքի ղեկավարի կողմից արտաքին գովազդի թույլտվություն տրամադրելու մասերով:

Ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու գովազդի թույլտվության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող սույն որոշման նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 16-Ն որոշումը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի տասներկրորդ՝ ***««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2021 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշման նախագծի շուրջ բժիշկ Մ, Միքայելյանը ներկայացրեց, որ 2022 թվականի փետրվարի 28-ին N 40 գրությամբ ներկայացրել է պոլիկլինիկայի 2022 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2021 թվականի կատարողականը՝ ավագանու հաստատմանը ներկայացրելու համար:

Որոշվեց՝

հավանություն տալ ***««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2021 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի տասներեքերորդ՝ ***«Բյուրեղավան համայնքի սեփականության 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին»*** որոշման նախագծի վերաբերյալ Շուշիկ Ասատրյանը ներկայացրեց, որ ***«Բյուրեղավան*** համայնքի սեփականության 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» ***Բյուրեղավան*** համայնքի ավագանու որոշման նախագծով սահմանվում են թվով 24 հասցեներ, որոնք սահմանվում են համայնքի սեփականություն

հանդիսացող ինչպես գույքի, այնպես էլ իրերի, դրամի և պարտավորությունների գույքագրման օրինակելի ձևերը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի սեփականության 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի տասնչորսերորդ՝ ***«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին»*** որոշման նախագծի վերաբերյալ արվեստի դպրոցի տնօրեն Նարինե Զաքարյանը ներկայացրեց, որ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրենի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի N 64 հրամանով ստեղծված հանձնաժողովը ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն իրականացրել է «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ում առկա մաշված, արդիականությունը կորցրած, երաժշտական գործիքների և հիմնական միջոցների դուրսգրման աշխատանքներ և կազմել ու ներկայացրել նշված գույքերի դուրսգրման ակտ (Զեկուցագիր N 146)

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վերջին՝ «***Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին»*** որոշման նախագծի շուրջ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի բնակիչ Արման Ռաֆիկի Մանուկյանը դիմել է համայնքապետարան իրեն պատկանող ՎԱԶ 21099 մակնիշի 35 SQ 132 պետհամարանիշով ավտոմեքենայի գույքահարկի գծով արտոնություն ստանալու մասին: Նա ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ նշված մեքենան 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված ռազմական գործողությունների պատճառով մնացել է Մարտակերտի շրջանի Մատաղիս համայնքում:

Հաշվի առնելով վերը նշվածը համայքնի ղեկավարը ավագանուն առաջարկում է սահմանել արտոնություն Արման Ռաֆիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող ՎԱԶ-21099

մակնիշի 35 SQ 132 պետհամարանիշով ավտոմեքենայի 17312 դրամ գույքահարկի գծով՝ 2020 թվականից մինչև 2022 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի պարտավորության նկատմամբ:

Որոշվեց՝

հավանություն տալ «***Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան